



Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությամբ կանայք»
լրատուի հավելված

ՓԵՏՐՎԱՐ - ԱՊՐԻԼ - 2009, №1-2

Հարգելի՛ ընթերցող, 2008 թ. սեպտեմբերից մինչև 2009 թ. ապրիլը երեք հասարակական կազմակերպություններ՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան և Հայաստանի բժիշկ ուսանողների գիտական ասոցիացիան, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացրին հասարակության իրազեկման նախագիծը:

«Կանանց երկխոսություն» թերթի սույն համարը նվիրված է գենդերային բռնության՝ որպես խտրականության դրսևորման և մարդու իրավունքների ոտնահարման ձևերից մեկի հիմնախնդիրներին:

Ներկայացված են նյութեր և հոդվածներ, որոնք պատմում են ծրագրի իրականացման մասին:

«Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագիրը



Ծրագրի իրականացման առաջին փուլում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հեղափոխությունների կենտրոնի փորձագետները մշակել են տեղեկատվական նյութեր ժամանակակից հայ հասարակության գենդերային հիմնախնդիրների, գենդերային բռնության, գենդերային հավասարության, դրանց վերաբերյալ միջազգային և ազգային իրավական փաստաթղթերի, ընդդեմ գենդերային բռնության փարսածաշրջանային և միջազգային նախաձեռնությունների մասին ուսուցանողների համար կազմակերպված հնգօրյա սեմինարի և իրազեկման բարձրագույն երկօրյա հանդիպումների անցկացման համար:

Ապագա 28 դասավանդողները՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական կառավարման և Երևանի ու հանրապետության 8 մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ, Ծաղկածորում անցկացված հնգօրյա սեմինարի ընթացքում յուրացրեցին գիտելիքներ կենսաբանական սեռի և գենդերի՝ որպես սոցիալական կոնստրուկտի տարբերությունների, գենդերային համակարգի, գենդերային նորմերի, գենդերային հավասարության և գենդերային ան-

հավասարակշռության, գենդերային սոցիալականացման և գենդերային կարծրատիպերի ձևավորման պատճառների, քաղաքականության մեջ, աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում, ընտանեկան հարաբերություններում գենդերային խտրականության հիմնախնդիրների մասին:

Հատուկ ուշադրություն է դարձվել գենդերային բռնությանը՝ որպես խտրականության դրսևորման, և դրա այնպիսին ձևերին, ինչպիսիք են սեռական, ֆիզիկական, զգայա-հոգեբանական,



սոցիալ-տնտեսական բռնությունը: Սեմինարի առանձին պարապմունքներ նվիրվել են ընտանեկան բռնության հիմնախնդիրներին: Իսկ «Մարդկանց առևտուր» ֆիլմի դիտումը հնարավորություն է տվել բանավեճ ծավալելու Հայաստանում այդ երևույթի տարծվածության և խնդրի հրատապության շուրջ:

Ապագա դասավանդողները տեղեկություններ ստացան կանանց վիճակի բարելավման և հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում կանանց դերի բարձրացման ուղղությամբ ՄԱԿ-ի կառույցների գործունեության, գենդերային հավասարության և բռնության հաղթահարման մասին միջազգային և ազգային փաստաթղթերի, ընդդեմ գենդերային բռնության տարածաշրջանային նախաձեռնությունների, ընդդեմ բռնության միջազգային շարժման և «16 օր ընդդեմ գենդերային բռնության» ամենամյա նախաձեռնության, «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի մասին:



Ծրագրի իրականացման երկրորդ փուլում դասավանդողները փորձագետների մասնակցությամբ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Լոռու մարզի Ստեփանավան, Ալավերդի քաղաքներում, Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում, Արարատի մարզի Արտաշատ քաղաքում, Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում, Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան, Նոր Հաճն, Եղվարդ քաղաքներում անցկացրին 12 երկօրյա և 9 մեկօրյա իրազեկման բարձրացման հանդիպումներ:

Այդ հանդիպումներն անցկացվել են տարբեր նպատակային խմբերի՝ տղամարդկանց, կանանց, պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ուսանողների և դպրոցականների համար՝ տարիքային առանձնահատկությունների, սեռի և կրթության մակարդակի հաշվառմամբ:

Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Աշտարակում, Նոր Հաճնում դպրոցական-

ների և ուսանողների հետ հանդիպումների ժամանակ օգտագործվել են իրական պատմություններ, գիտելիքներն ամրապնդվել են տարբեր առաջադրանքների և վարժությունների կատարմամբ, որի ընթացքում դպրոցականները և ուսանողները սովորել են կենսաբանական առանձնահատկությունները տարբերել գենդերային հատկանիշներից, որոնք պայմանավորված են տղամարդկանց և կանանց՝ մշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ գործոնների ազդեցությամբ ձևավորվող սոցիալական դերերով:

Պարապմունքների բանավեճի ձևաչափը դասավանդողներին հնարավորություն էր տալիս մասնակիցների արտահայտած կարծիքների և բերված օրինակների հիման վրա ներկայացնելու գենդերային հավասարության և գենդերային խտրականության թեման տղամարդկանց և կանանց իրավունքների և հնարավորությունների հավասարության տեսանկյունից, բացահայտելու աշխատանքի

ոլորտում, քաղաքականության մեջ և ընտանիքում դրսևորվող գենդերային խտրականության պատճառներն ու արմատները: Դասավանդողներին հաջողվում էր ձևավորել գենդերային հավասարության հիմնախնդիրների՝ որպես հասարակության ներդաշնակ զարգացման անհրաժեշտ պայմանի ճիշտ ընկալում, բացատրել դպրոցականներին բոլոր ոլորտներում տղամարդկանց և կանանց ոչ միայն իրավունքների, այլև հնարավորությունների հավասարության ապահովման անհրաժեշտությունը: Ուշագրավ է, որ եթե աղջիկների խմբերին բնորոշ էին գենդերային խտրականության առկայության գիտակցման հետ կապված դժվարություններ, ապա տղաներից ոմանք կտրականապես մերժում էին գենդերային հավասարության սկզբունքը:

Մասնակիցների ակտիվ ներգրավմամբ, գենդերային բռնության հիմնախնդիրների քննարկումների և վարժությունների օգնությամբ նրանց ուշադրությունը հրավիրվում էր այն իրողության վրա, որ բռնությունը խտրականության և մարդու



իրավունքների ոտնահարման դրսևորում է, քննարկվում էին բռնության հիմնական ձևերը, ներառյալ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, զգայական և սոցիալ-տնտեսական բռնությունը, դրանց առանձնահատկություններն ու պատճառները: Ամփոփելով քննարկումները՝ դասավանդողները ձևակերպում էին գենդերային բռնության սահմանումը, ներկայացնում վիճակագրական տվյալներ տարբեր երկրներում այդ երևույթի տարածման չափերի մասին:

Հատուկ ուշադրություն է հատկացվել ընտանիքում գենդերային բռնության հիմնախնդիրներին: Աշխատելով խմբերում՝ դպրոցականները և ուսանողները քննարկում էին տարբեր ընտանեկան կոնֆլիկտային իրավիճակներ, դրանց հնարավոր հետևանքները և առաջարկում էին դրանց լուծման տարբերակներ: Նրանց բերած օրինակներից պարզորոշ էր դառնում երևույթի տարածվածությունը Հայաստանում. մասնակիցներից շատերը իրենց ընտանիքում կամ հարևանների, ծանոթների, ազգականների ընտանիքներում վկա էին եղել բռնության դեպքերի:

Ուսանողները և դպրոցականները մեծ հետաքրքրությամբ էին ընկալում տեղեկատվությունը, հատկապես գենդերային հավասարության, ընտանեկան բռնության, թրաֆիքինգի թեմաները, աշխուժություն էին ցուցաբերում խմբերում աշխատելիս և վարժություններ կատարելիս: Դասավանդողներին հաջողվում էր լիարժեք հաղորդակցվել լսարանի հետ, ստեղծել անմիջականության մթնոլորտ, որը նպաստում էր մասնակիցների՝ սեփական դիրքորոշման ազատ արտահայտմանը և այնպիսի թեմաների ընկալման դժվարությունների հաղթահարմանը, ինչպիսիք են «գենդերային կարծրատիպերը» և «գենդերային խտրականությունը»: Քննարկման ընթացքում, տղաներն ու աղջիկները օրինակներ էին բերում, թե ինչպես են գենդերային կարծրատիպերը գենդերային անհավասարություն ձևավորում, ինչպես են այդ գործընթացների վրա ազդում ՁԼՄ-ները և զովազդը:

«Մածունը սև է» ֆիլմի և «Ոչ բռնությամբ» հոլովակի ցուցադրումը մեծ հետաքրքրություն և բուռն քննարկում առաջացրեց, որի ընթացքում մասնակիցներն արտահայտում էին տարբեր կարծիքներ, բայց մեծ մասն արձանագրում էր, որ ֆիլմում ներկայացված հիմնախնդիրները իրական են և գոյություն ունեն մեր իրականության մեջ:

Ամփոփելով արդյունքները՝ ուսանողներն ու դպրոցականները նշում էին, որ հարստացան նոր

գիտելիքներով, իրենց աշխարհայացքում կատարվել են արմատական փոփոխություններ, որոնք կօգնեն ձերբազատվել շատ կարծրատիպերից և ապրել արժանապատիվ կյանքով: «Որքան շատ գիտելիքներ ունի մարդը, այնքան ավելի հեշտ է հաղթահարում դժվարությունները», - ընդգծում էին նրանք:

Վանաձորում, Սևանում, Արտաշատում կանանց խմբերի հետ, Երևանում, Գյումրիում, Վանաձորում տղամարդկանց խմբերի հետ, Աբովյանում, Հրազդանում, Եղվարդում տղամարդկանց և կանանց համատեղ խմբերի հետ անցկացված հանդիպումները բացահայտեցին գենդերային հավասարության և գենդերային բռնության հիմնախնդիրների ընկալման կախումը մասնակիցների սոցիալական կարգավիճակից և կրթական մակարդակից:

Գիտելիքների հաղորդումն այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսիք են գենդերային դերերը, գենդերային կարծրատիպերը, ուղեկցվում էին գործնական վարժությունների կատարմամբ, որոնց ընթացքում մասնակիցները բազմաթիվ օրինակներ էին բերում սեփական կյանքից, արտահայտում հակասական կարծիքներ, ինչը վերջին հաշվով հանգեցնում էր կարծրատիպերի առկայության և հասարակական զարգացման գործընթացում գենդերային նորմերի փոփոխականության գիտակցմանը:

Մասնակիցներին ներկայացված վիճակագրական տվյալները աշխատանքի շուկայի, զբաղվածության ոլորտի իրավիճակի, Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերում հորիզոնական և ուղղաձիգ խտրազատման, գենդերային խտրականության ուղղակի և անուղղակի դրսևորումների, իշխանական կառույցներում և քաղաքականության մեջ գենդերային անհավասարակշռության մասին բուռն քննարկումների տեղիք էին տալիս, ու թեև մասնակիցները ցուցաբերում էին գենդերային խտրականության հիմնախնդրի ոչ միանշանակ ընկալում, այդուհանդերձ իրենք էին բերում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց նպատմամբ խտրականության օրինակներ:

Նշելով, որ գենդերային հավասարությունը հասարակության ներդաշնակ զարգացման պարտադիր պայման է, դասավանդողները մասնակիցներին գիտելիքներ էին հաղորդում տղամարդկանց և կանանց վրա ընդունվող օրենքների և իրականացվող ծրագրերի ազդեցության բացահայտման գործում գենդերային վերլու-



ծության նշանակության մասին, հնարավորությունների հավասարության ու խտրական որոշումների կանխարգելման ապահովմանն ուղղված միջոցների որոնման և ընդունման հնարավորությունների մասին:

Գենդերային հավասարության հիմնախնդիր-

գենդերային խտրականության բազմաթիվ օրինակներ, ընդ որում կանանց առաջին հերթին և առավելապես անհանգստացնում էր քաղաքականության մեջ առկա գենդերային անհավասարակշռությունը:

Տղամարդիկ ավելի քննադատաբար և ռացիո-

... Կանանց նկատմամբ բռնությունը տղամարդկանց և կանանց միջև ուժերի պայմանականորեն չհավորված անհավասար հարաբերակցության դրսևորում է, մի հարաբերակցություն, որը հանգեցրել է կանանց վրա տղամարդկանց գերիշխմանը և նրանց նկատմամբ խորականությանը տղամարդկանց կողմից, ինչպես նաև խոչընդոտում է կանանց դրության համակողմանի բարելավումը...

Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիր (1993 թ.), նախաբան

ների քննարկումը վկայում էր ինչպես մասնակիցների կողմից գենդերային հավասարության գաղափարախոսության դրական ընկալման, այնպես էլ տղամարդկանց և կանանց համար հնարավորությունների անհավասարության հետ կապված իրավիճակի թերազնահատման մասին: Այսպես, Վանաձորում, որտեղ խմբի զգալի մասը կազմում էին տնային տնտեսուհիները, մասնակիցները հանդիպման սկզբում բացասական վերաբերմունք դրսևորեցին գենդերային հավասարության և բռնության հիմնախնդիրների քննարկման կապակցությամբ՝ համարելով, որ «կնոջ պարտքն է ենթարկվել ամուսնուն, ինչպես ասված է սուրբ գրքում»:

Երևանում, Սևանում և Արտաշատում հանդիպումների մասնակիցները՝ հիմնականում աշխատող, հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցող կանայք, ճիշտ էին ընկալում գենդերային բռնության հիմնախնդիրները: Դրանք քննարկելիս նրանք բերում էին այնպիսի կոնֆլիկտների օրինակներ, ինչպիսիք են մասնագիտության ընտրության հարցում աղջիկների հնարավորությունների սահմանափակումը ընտանիքի անդամների կողմից կամ ծնողների արգելումը սպորտում հաջողության հասած աղջկան մեկնելու հանրապետությունից դուրս անցկացվող մրցումների, կամ աղջիկների մասնակցության արգելումն իրենց քաղաքից դուրս անցկացվող միջոցառումներին: Ակտիվ քննարկումների և բանավեճերի ընթացքում մասնակիցները բերում էին աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում, քաղաքականության մեջ և որոշումների կայացման մակարդակում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց նպատմամբ

նալ էին ընկալում գենդերային բռնության հիմնախնդիրները, նրանց ավելի շատ հետաքրքրում էին որոշակի տվյալները հանրապետության իրավիճակի մասին, պետական կառույցների վերաբերմունքը այդ հիմնախնդիրներին, նրանք հիմնախնդրի լուծման ուղղությամբ որոշակի միջոցների ձեռնարկման տարբեր առաջարկություններ էին անում: Հանդիպումների մասնակիցները փորձում էին բացահայտել գենդերային բռնության պատճառները՝ դիտարկելով փոխադարձ կապը խտրականության և բռնության միջև, ուսումնասիրում էին կապը բռնության պատճառների և հետևանքների միջև՝ նշելով մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

Շահագրգիռ և ակտիվ քննարկումներ էին ծավալվում ընտանեկան բռնության հիմնախնդրի շուրջ: Վերլուծելով ընտանեկան բռնության իրենց հայտնի դեպքերը, մասնակիցները դրա հիմնական պատճառների շարքում նշում էին ցածր կրթական մակարդակը, դաստիարակության թերությունները, կանանց՝ սեփական իրավունքների չիմացությունը, նրանց անպաշտպանությունը և այլն: Հետաքրքիր է հանդիպումների մասնակիցների այն կարծիքը, որ հիմնախնդիրների լուծման նման մեթոդների կարող են դիմել միայն թույլ, չկայացած տղամարդիկ և կանայք:

Թրաֆիքինգի նկատմամբ հակասական վերաբերմունք էին դրսևորում թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ՝ համարելով, որ շատ դեպքերում մարդիկ տեղեկացված են, թե ինչ ռիսկի են դիմում՝ աշխատանքի մեկնելով այլ երկիր: Բերվող հայտնի օրինակները վկայում էին, որ այդ երևույթը Հայաստանում բավական տարածված



է, քիչ չեն դեպքերը, երբ ոչ միայն կանայք, այլև տղամարդիկ են դառնում թրաֆիքինգի զոհ: Շատերը նշում էին, որ հասարակությունը գիտի թրաֆիքինգի հիմնախնդրի մասին, թեև այդ թեման հիմնականում փակ է: Մասնակիցները համաձայնում էին, որ մեր երկրում այդ երևույթը արդեն սպառնացող չափերի է հասել, շատերը համարում էին, որ անհրաժեշտ է պայքարել դրա դեմ, այդ թվում նաև բնակչության իրազեկման բարձրացման միջոցով: «Կարմիր քարտ» ավստրիական ֆիլմի դիտումը հնարավորություն տվեց բանավեճ ծավալելու ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենսդրություն ընդունելու անհրաժեշտության հարցի շուրջ՝ օգտագործելով ընտանեկան բռնության հաղթահարման գործում այլ երկրների փորձը:

Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման կառույցների հետաքրքրությունը գենդերային իրավահավասարության և գենդերային բռնության հիմնախնդիրների նկատմամբ՝ Ասոցիացիան Լոռու մարզպետարանի հետ համատեղ նախաձեռնեց Վանաձորում, Ստեփանավանում ու Ալավերդիում գենդերային հիմնախնդիրների և գենդերային բռնության մասին իրազեկման բարձրացման երեք մեկօրյա հանդիպումներ Գուգարքի, Սպիտակի, Թումանյանի, Ստեփանավանի, Նոյեմբերյանի, Տաշիրի տարածաշրջանների գյուղապետերի համար:

Հանդիպման մասնակիցները՝ բնակչության

րի, գենդերային իրավահավասարության ապահովմանն ուղղված ազգային հիմնական իրավական փաստաթղթերի և գործող օրենսդրական նորմերի, «Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» մասին հնարավորություն կտա նրանց օգտագործելու դրանք ամենօրյա գործունեության ընթացքում:

Երևանում և հանրապետության տարածաշրջաններում անցկացված հանդիպումները, որոնց մասնակցել է 570 մարդ, ցույց տվեցին, որ հասարակայնությունը, հատկապես մարզերում, իրազեկման բարձրացման կարիք ունի: Բանավեճերը, բազմաթիվ հարցերը գենդերային բռնության և թրաֆիքինգի վերաբերյալ, շահագրգիռ վերաբերմունքը քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում գենդերային հավասարակշռության հիմնախնդիրների նկատմամբ բացահայտեցին, մի կողմից, հանդիպումների մասնակիցների՝ այդ հիմնախնդիրների մասին ցածր իրազեկությունը, մյուս կողմից՝ նրանց հետաքրքրությունը գենդերային խտրականության, գենդերային բռնության՝ որպես խտրականության դրսևորման հիմնախնդիրների նկատմամբ, ինչպես նաև գիտակցումը, որ միջազգային իրավական փաստաթղթերի իմացությունը կարող է հիմք դառնալ քաղաքացիների իրավունքների պաշտպանության և կյանքում բացասական դրսևորումների հաղթահարման համար:

Պեպրությունները պեպք է դադարապարպեն բռնությունը կանանց նկատմամբ և չպեպք է վկայակոչեն որեէ սովորույթ կամ կրոնական շարժառիթ այդ բռնությունն արմատախիլ անելու գործում իրենց պարպականություններից խուսափելու համար: Պեպրությունները պեպք է անհապաղ շեռնամուխ լինեն կանանց նկատմամբ բռնությունը բոլոր պարշան միջոցներով արմատախիլ անելու քաղաքականության իրականացմանը...

Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիր (1993 թ.), հոդված 4

հետ անմիջականորեն աշխատող գյուղապետերը, նշում էին գենդերային հավասարության և գենդերային բռնության վերաբերյալ իրազեկման բարձրացման, գենդերային հավասարության և ընդդեմ գենդերային անհավասարության ու բռնության պայքարի մեխանիզմների մասին գիտելիքների յուրացման կարևորությունը: Ներկայացված տեղեկատվությունը կանանց վիճակին նվիրված միջազգային համաժողովներում ընդունված հիմնական փաստաթղթերի և ծրագրե-

երկօրյա և մեկօրյա հանդիպումների մասնակիցներին, հաշվի առնելով նրանց մասնագիտական զբաղվածությունը և հասարակական գործունեությունը, տրամադրվել են նյութեր գենդերային հիմնախնդիրների և գենդերային բռնության, միջազգային և ազգային իրավական փաստաթղթերի վերաբերյալ:

Չեմմա Հասրաթյան
Համալսարանական կրթությամբ
կանանց սոցիալախի նախագահ



Հայաստանում գենդերային բռնության մասին պատկերացումները և խնդրի ըմբռնումնը շատ թույլ են



Մրդկանուր եզրույթ, այնուամենայնիվ այն կարելի է բնութագրել որպես **սեռով պայմանավորված ֆիզիկական, սեքսուալ, հոգեբանական և տնտեսական բնույթի ցանկացած բռնության կիրառում**: Ներկայումս աշխարհում **3 կանանցից 1-ը** իր կյանքի ընթացքում ենթարկվում է **ֆիզիկական կամ սեռական բռնության**: Այն փաստը, որ արդի հասարակությունում հիմնականում կանայք են ենթարկվում գենդերային բռնությանը, պայմանավորված է կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների առկա անհավասարությանը:

Առանձնակի ուրախությամբ են ողջունում այս հրապարակումը, որը նպատակ ունի աջակցել և լիցք հաղորդել գենդերային բռնության կանխարգելման և հաղթահարման համընդհանուր ջանքերին:

Վերջին տարիներին մենք ականատես ենք դարձել հասարակական կազմակերպությունների, կանանց միությունների և այլ խմբերի կողմից գենդերային բռնության դեմ ուղղված գործողությունների: Տարբեր կառույցների կողմից տարվող այս աշխատանքը հնարավորություն է ընձեռել ավելի լավ ըմբռնելու երևույթի բնույթն ու ծավալները, ինչպես նաև դրա ներգործությունը կանանց վրա՝ մասնավորապես և հասարակությունների վրա՝ ընդհանրապես:

Այսօր գենդերային բռնության խնդիրը ճանաչում է ձեռք բերում որպես մարդու իրավունքների ոտնահարման ամենաակնառու ձևերից մեկը, որը առկա է գրեթե բոլոր հասարակություններում: Թեև այսօր չկա գենդերային բռնությունն սահմանող մեկ հա-

ցերին օժանդակելու նպատակով 2008թ. ապրիլից ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը իրականացնում է «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» եռամյա ծրագիրը:

«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» **ծրագիրը (ԸԳԲ) հիմնախնդրի լուծմանը նպաստող առաջին տարածաշրջանային ծրագիրն է**, որը գործում է ինչպես քաղաքականության մշակման, այնպես էլ համայնքային մակարդակում՝ ապահովելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը ծրագրերի իրականացման, վերահսկման և գնահատման ողջ ընթացքում: Ծրագրի իրականացմամբ ՄԱԲՀ-ն օժանդակում է գենդերային զգայուն օրենսդրության ընդունմանը, ինչպես նաև ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը, քաղաքականություն մշակողների, կրթողների և ընդհանուր հասարակության, ինչպես նաև թիրախային խմբերի՝ գենդերային բռնության մասին իրազեկության բարձրացմանը, Տեղական և տարածաշրջանային մակարդակներում բազմակի գործիչների միջև գործնական կապերի ձևավորման և համագործակցության ուժեղացմանը, Տարածաշրջանում գենդերային բռնության խնդիրների արդյունավետ լուծման համար ազգային մեխանիզմի կարողությունների կատարելագործմանը և այս դաշտում մասնագետների, այդ թվում ոստիկանության և դատախազության, սոցիալական և առողջապահության ոլորտի աշխատողների, վիճակագիրների և այլ ներգրավված գործիչների

Գենդերային բռնությունը կարող է խոչընդոտել կայուն զարգացմանն ուղղված նույնիսկ ամենավճճական քայլերի իրականացումը և արգելք դառնալ մարդու իրավունքները, այդ թվում կանանց իրավունքները հարգելու և պաշտպանելու վրա հիմնված ժողովրդավարական արժեքներ ունեցող առողջ և բարգավաճող հասարակության ձևավորմանը:

Հայաստանում գենդերային բռնության մասին պատկերացումները և խնդրի ըմբռնումնը շատ թույլ են: Չկա գենդերային հավասարությանը, գենդերային բռնությանը, այդ թվում ներընտանեկան բռնությանը վերաբերող որևէ առանձին օրենք:

Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում գենդերային բռնությունների կրճատմանը նպաստող միջավայր ստեղծելու և այս դաշտում իրենց միջազգային պարտականություններն իրականացնելու հարցում երկր-



իրազեկության բարձրացմանը: Ծրագիրն իրականացվում է համահանրապետական հետազոտությունների, ուսուցման ծրագրերի, օրենսդրական նախաձեռնությունների, ինչպես նաև ազգային մեխանիզմի կարողությունների զարգացում միջոցով:

Գենդերային բռնության կանխարգելումը և հավասար իրավունքների և հնարավորությունների խթանումը պետք է դառնան առաջնահերթ խնդիրներ և ներառվեն ՀՀ-ի քաղաքականության մեջ, ինչը կնպաստի երկրում գենդերային բռնության դեմ արդյունավետորեն պայքարելու համար անհրաժեշտ բարենպաստ իրավական դաշտի ստեղծմանը: Ուստի անհրաժեշտ է այս խնդրի լուծման համար համապատասխան պահանջարկ ձևավորել ինչպես հասարակության, այնպես էլ որոշում կայացողների մակարդակում:

մալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» և «Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունները: Նրանք ունեն կանանց իրավունքների, գենդերային և գենդերային բռնության հիմնախնդիրների, վերարտադրողական առողջության և մեծահասակների կրթության ոլորտներում աշխատանքի երկար տարիների փորձ, ինչպես նաև ձեռք են բերել ճանաչում միջազգային, ներառյալ ՄԱԿ-ի կառույցների հետ աշխատանքում: Ուսուցման ծրագրի առաջին իսկ տարվա ընթացքում այս կազմակերպությունների կոնսորցիումը լուրջ հաջողություններ է գրանցել՝ ՄԱԲՀ ԸԳԲ ծրագրի աջակցությամբ մշակելով ուսուցանողների ուղեցույց և դասընթացային այլ նյութեր, պատրաստելով գենդերային բռնության թեմաներով

մալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան՝ մեծապես օժանդակելով կանանց դեմ ուղղված բռնության շեշտադրմանը՝ որպես մարդու իրավունքների և զարգացման կարևորագույն հիմնախնդրի: Բռնությունից և խտրականությունից զերծ միջավայրում ապրելու իրավունք ունի յուրաքանչյուր մարդ: Այնուհանդերձ այս իրավունքը ոտնահարվում է զանգվածաբար և պարբերաբար: Կանանց հանդեպ բռնությունը շարունակվում է աշխարհի բոլոր ծայրերում՝ խաթարելով հանրային տնտեսության առաջադիմությունն ու շոշափելի վնաս հասցնելով ընտանիքներին, համայնքներին և ազգերին:

Տեղեկատվության տարածումը կարևոր քայլ է միմյանց փորձին և նվաճումներին ծանոթանալու առումով: Մենք պարտավոր ենք համադրել մեր ջանքերը՝

«Կանանց նկատմամբ բռնություն» նշանակում է սեռական հարկանիշով կատարվող բռնության ամեն մի գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական զրկում ազատությունից, լինի հասարակական թե անձնական կյանքում:

Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիր (1993 թ.), հոդված 1

Այդ առումով կրթական և իրազեկության բարձրացման ծրագրերի իրականացումը շատ կարևոր են ցանկալի արդյունքի հասնելու համար:

«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում նախատեսված ուսուցման ծրագրերի և ՀՀ մարզերում իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացման գործում ՄԱԲՀ-ի ազգային գործընկերներ դարձան «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն», «Հա-

60 ուսուցանողներ, այդ թվում՝ պետական կառույցների, տեղական իշխանությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ, իրազեկել է ավելի քան 550 երիտասարդների, կանանց և տղամարդկանց, այդ թվում՝ դպրոցականների և բուհերի ուսանողների, վերապատրաստել է ավելի քան 160 պաշտոնյաների, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների:

Այս պատմությունները ներկայացնում է մեր գործընկեր Հա-

գենդերային բռնության համակարգված արձագանքման ինստիտուցիոնալացումն ապահովելու նպատակով:

Հուսով եմ, որ այս ոգեշնչող հոդվածները ուղեմիջ կծառայեն գենդերային բռնությունների դեմ ուղղված անհանդուրժողականությանը՝ այդ երևույթի շուրջ հաստատված լռության ավանդույթին վերջ դնելու համար:

Ջինա Սարգիզովա

«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի ազգային համակարգող, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ



Գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումները Գյումրիում



ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» եռամյա ծրագիրը որոշակի խնդիրներ ու նպատակներ ունի Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում: Ժամանակակից աշխարհում ամեն քայլափոխի հանդիպող ու ահագնացող բռնության հիմնախնդիրը մեծ չափերի է հասել նաև մեր հանրապետությունում, որը պայմանավորված է մի շարք գործոններով:

Հասարակության զարգացմանը նպաստող, պետական, հասարակական ոլորտներում կանանց կարգավիճակի բարելավմանը, նրանց նկատմամբ բռնության երևույթների նվազեցմանն ուղղված խնդիրների լուծման հարցում կարևոր աշխատանք կատարվեց վերը նշված ծրագրի շրջանակներում աշխատող երեք կազմակերպությունների՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի և Հայաստանի բժիշկ ուսանողների գի-

տական ասոցիացիայի շնորհիվ: Ձեռնարկված աշխատանքները դրական ազդեցություն ունեցան, արդարացրեցին կազմակերպիչների հույսերն ու սպասելիքները: Գենդերային հավասարության հիմնախնդիրների շուրջ հասարակական կարծիք ստեղծելու, գենդերայնորեն զգայուն հասարակություն ձևավորելու ճանապարհին ներդրում ունենալու համար իրազեկման բարձրացմանն ուղղված այս հանդիպումները կարևոր նշանակություն ունեցան:

«Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագիրն իրականացվել է երկօրյա հանդիպումների ձևով, որոնք կազմակերպվել են տարբեր սեռատարիքային խմբերի համար: Նախատեսված հանդիպումներում սպասելիքները տարբեր էին, խոսքը հատկապես տղամարդկանց և տղա դպրոցականների մասին է, որոնցից սպասում էինք

մտքերի և տարածայնությունների արդյունքում ձևավորվեց գենդերայնորեն հանդուժող, զգայուն մթնոլորտ:

Երկօրյա հանդիպումների համար նախատեսված թեմաների ճիշտ ընտրությունը, ուսուցանողների և փորձագետի պատրաստվածությունը (տարբեր մեթոդների կիրառում, նյութի հիմնավոր ներկայացում, ինտերակտիվ պարամունքներ անցկացնելու հմտություն) հնարավորություն տվեցին համակարգված ներկայացնելու հիմնախնդիրը՝ կապված գենդերային խտրականության, գենդերային բռնության տարբեր դրսևորումների հետ:

Հանդիպումների համար ընտրված խմբերից երկուսի առնչությամբ (տղա դպրոցականներ և պետական մարմիններից, քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից ընտրված տղամարդիկ) մտավախություն կար, թե դժվար կլինի որևէ արդյունքի հասնել հատկապես առաջին օրվա համար նախատեսված թեմաների քննարկման ժամանակ, որն ընդգրկում էր գենդերային հիմնահարցերի, գենդերային կարծրատիպերի, գենդերային սոցիալականացման, գենդերային հավասարության և խտրականության մասին հիմնահարցերը: Իրազեկության ցածր մակարդակի, կցկտուր կարծիքների պայմաններում տեղի ունեցավ հակառակը. մատուցված գիտելիքների և հանդուժողականության մթնոլորտի շնորհիվ արդյունավետ աշխատանք ապահովվեց: Պետական մարմինների ներկայացուցիչների ընտրությունը և մասնակցությունը այս հան-

Եթե փանդիկինն իր պարպականությունը չի կախարում, ամուսինը սպիալված է բռնության ենթարկել կնոջը: Ես դա փեսեյ եմ և ասում եմ մեր հարևանների օրինակով:

Էդգար Հովհաննիսյան, Գյումրու ակադեմիական հենակերպային վարժարանի 8-րդ դասարանի աշակերտ

քննարկվելիք հարցերի նկատմամբ անհամաձայնության ու անհանդուրժողականության դրսևորում: Սակայն առաջին օրվանից հետո այդ կարծիքը փոխվեց, քանի որ հակասական



դիպուկներին միտված էր պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում կանանց իրավիճակի բարելավմանն ուղղված հարցերի ընդգրկմանը, գենդերային հավասարության հասնելու գործընթացներն առաջ մղելուն, բռնության երևույթները չանտեսելու և կանխելու հատուկ մեխանիզմների մշակմանը:

Բուռն արձագանքներ եղան հատկապես Հայաստանում տեղի ունեցող բռնության երևույթների, դրանց մեծ չափերի առնչությամբ, որոնց մարդիկ ամենուր բախվում են, բայց հիմնավոր իրազեկությունը պակասում է: Անտեսվում են աշխատանքի ոլորտում, ընտանիքում կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները: Շատերն անտեղյակ էին, որ գենդերային արդարություն ու հավասարություն ապահովելու խնդիրները, բռնությունը կանխարգելելուն ուղղված աշխատանքները դարձել են միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության հոգածության առարկան, որոնք իրենց արտացոլումն են գտել միջազգային իրավական փաստաթղթերում: Այդ ամենն արտացոլված է նաև ՀՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ, սակայն իրականացման պայմաններն ու հնարավորություններն առայժմ ապահովված չեն:

Բոլոր մասնակիցները համա-

ծայն էին, որ Հայաստանում դեռ տեղաշարժ չի նկատվում, մեր հասարակությունը զերծ չէ խտրականության երևույթներից, և պատճառների շարքում նշվում էին անցումային շրջանի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական վատ վիճակը, գործազրկությունը, աղքատությունը, իրազեկության պակասը, հասարակության մեջ արմատացած կարծրատիպերը, հասարակական և մասնավոր կյանքի բոլոր բնագավառներում կանանց և տղամարդկանց անհամաչափության առկայությունը: Այս երևույթները մեղմացնելու ելքը



մասնակիցները տեսնում էին հետևյալում.

- բարձրացնել իրազեկության մակարդակը (սկսել դպրոցներից՝ մշակելով հատուկ և պարտադիր դասընթացներ),
- աշխատանքներ ծավալել երիտասարդության շրջանում,
- հաղորդել գենդերային գիտելիքներ (դաստիարակություն),
- պետական քաղաքականության մեջ ընդգրկել հավասար հնարավորությունների ապահովման հարցի լուծումը,
- աջակցել կանանց ՀԿ-ներին,
- հասարակության գիտակ-

ցության մեջ արմատավորել կանանց դերի կարևոր նշանակությունը,

- ազատել կնոջը սոցիալական օտարումից ու բռնությունից,
- հաղթահարել կարծրատիպերը,
- բարձրացնել կանանց քաղաքական ակտիվությունը,
- ապահովել ՁԼՄ-ների ակտիվ մասնակցությունը հիմնախնդրի լուսաբանման գործում,
- համագործակցել միջազգային կառույցների հետ,
- ապահովել իրազեկման հանդիպումների, կլոր սեղանների, սեմինարների շարունակականությունը:

Այս ամենը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ հանդիպումները հիմնահարցին լուրջ մոտեցում ցուցաբերելու խթան դարձան, փոխեցին մարդկանց ըմբռնումը՝ ձևավորելով գենդերայնորեն զգայուն միջավայր: Զինված լինելով գիտելիքներով՝ հասարակության անդամները կարող են կանխել կամ վերացնել շատ բացասական երևույթներ՝ չթողնելով, որ դրանք հասնեն բռնության: Անարդարության և բռնության նկատմամբ անհանդուրժողականությունը կհանգեցնի ներդաշնակ հասարակության ձևավորմանը:

Քնարիկ Սարգսյան

*Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս,
«Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի համակարգող Շիրակի մարզում*

«Շատ հաճախ են տրամադրիկ ուրնահարում կանանց իրավունքները, ծեծի ենթարկում»:

Չավեն Մերոյան, 8-րդ դասարանի աշակերտ



ԻՐԱԶԵԿՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԵՐԸ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ



Բռնությունն անընդունելի, առավել ևս ընտանեկան բռնությունն անպատվաբեր համարելով՝ որոշեցի մաս կազմել այն նվիրյալների, որոնք անհանգստացած են հասարակության մեջ արմատավորված լռությամբ և ընտանիքի ու կանանց իրավունքների պաշտպանությունը, աջակցությունն ու իրավահավասարության խթանումը համարում են իրենց առաքելությունը: Իրազեկության բացակայությունը, երևույթը լռության մատնելու սովորությունը կարող են իրապես անդառնալիորեն ախտահարել մեր հասարակությունը՝ պատճառելով խոր հոգեբանական վնասվածքներ, և ապաքինման խնդրում անգոր կլինի նույնիսկ ժամանակը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կազմակերպած «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» իրազեկման հանդիպումները Երևանում և մարզերում, կարծում եմ, մեծապես նպաստեցին հասարակության մեջ բռնություն երևույթը հասկանալուն, դրա մասին բարձրաձայնե-

լուն և կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Երևանի հյուսիսային համալսարանում մասնակիցները տարբեր ֆակուլտետների ուսանողուհիներ էին, որոնք դասընթացին մասնակցում էին առաջին անգամ, ուստի նյութը շատ հետաքրքրեց և խիստ զարմացրեց նրանց, այն առումով, որ XXI դարում դեռ գոյություն ունեն նման բնույթի խնդիրներ, սակայն նույնքան խորն էր հիացնումընքն այն համարձակ և վճռական կանանց նկատմամբ, ովքեր իրենց ուսերին են վերցրել կանանց նկատմամբ կիրառվող բռնությունների դեմ հանդես գալու և պայքարելու պատասխանատվությունը: Ուսանողները լուրջ անհանգստություն հայտնեցին և մեծ ցանկություն՝ բռնությունները կանխելու գործընթացում իրենց մասնակցությունը բերելու և նույնիսկ օրենքով սահմանված կարգով պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ:

Արտաշատում մասնակիցները կանայք էին, սակայն առավել փորձառու, բռնության խնդիրներին իրազեկ, քանի որ այն առավել ընդգծված է շրջաններում և գյուղերում: Չնայած ընդհանուր պատրաստվածությանը և իրավիճակին ծանոթ լինելուն՝ մասնակիցները կարծիք հայտնեցին, որ բռնության դեմ պայքարի ուսուցանվող մեթոդներն օգտակար կլինեն հետագա աշխատանքներում: Մասնակիցների մերօրյա բազում դատապարտելի պատմությունները քննարկման մեջ ներգրավեցին նույնիսկ ամենապասիվ մասնակցին: Նրանց կողմից առաջարկ եղավ հաջորդ հանդիպումներին իրա-

վիրել նաև տղամարդկանց և ուստիկանության ներկայացուցիչներին:

Երևանյան սեմինարը տղամարդկանց խմբի հետ ինձ հաճելիորեն զարմացրեց. մասնակիցները տարբեր տարիքի և մասնագիտության տեր տղամարդիկ էին՝ բազմաբնույթ հետաքրքրություններով: Հնչում էին տարաբնույթ կարծիքներ, ոմանք չէին ցանկանում ընդունել այն փաստը, որ կանանց նկատմամբ բռնությունը ռեալ իրականություն է, նրանց կարծիքով՝ այդպիսի բան չկա, հասարակության մեջ կանանց և տղամարդկանց իրավունքները հավասար են: Ընտանեկան բռնությունները նրանց կողմից նույնպես չէին ընդունվում: Սակայն կային տղամարդիկ, ովքեր և՛ ընդունում, և՛, առավել ևս, խրախուսում էին բռնության դրսևորումների դեմ տարվող աշխատանքը:

Տարբեր տարիքի, սեռի, տարբեր բնագավառների և կենսակերպի մարդկանց հետ քաղաքային և գյուղական համայնքներում իրազեկման հանդիպումների արդյունքների վերլուծությունը հանգեցրեց այն եզրակացության, որ հիմնախնդիրը գոյություն ունի, արդիական է, հասարակության կողմից հետաքրքրությունը նպաստում և ամրապնդում է մեր կողմից իրականացվող առաքելությունը շարունակական դարձնելու գաղափարը:

Լիանա Ղազարյան

ՀՀ մշակույթի նախարարության իրավաբանական և վերահսկողության վարչության աշխատակից, «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի ուսուցանող



ԾԵՂՔԵԼ ԼՈՒԻԹՅՈՒՆԸ

Կանանց նկատմամբ բռնությունը բարդ երևույթ է, որը սերտորեն կապված է հասարակության ձևավորման, մշակութային արժեքների, տնտեսական անհավասարության և արական սեռի գերակայության վերաբերյալ տղամարդկանց (հաճախ նաև ոչ միայն նրանց) թյուր պատկերացումների հետ: Կանայք խոցելի են. նրանք բռնության են ենթարկվում ամբողջ կյանքի ընթացքում: Նույնիսկ մինչև ծնվելը, էմբրիոնալ վիճակում, ավելի շատ աղջիկներ են արհեստական վիժման միջոցով սպանվում, քան տղաներ: ՄԱԿ-ի պաշտոնական տվյալներով՝

ներով, ֆիզիկական բռնությանը, սեռական հետապնդումներով, փոքր հասակում ստիպողաբար ամուսնություններով և այլն:

Կանանց դեմ բռնության կանխարգելման և վերացման առաջնային նախապայմանն է տվյալ հասարակությունում արմատավորված կարծրատիպերի և կանանց նկատմամբ թերահավատության հաղթահարումը: Բացի այդ, շատ երկրներում և մեր հանրապետությունում նույնպես կանանց նկատմամբ բռնության երևույթը լռության մատնելու մոտեցումը դժվարացնում է իրական պատկերի ձևավորումը: Կարևոր պատ-

սարանում անցկացվեց «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» իրազեկման բարձրացման հանդիպում, որն անցկացրեցին ՀՀ մշակույթի նախարարության իրավաբանական և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ, պետի պաշտոնակատար Լիանա Ղազարյանը, Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի ուսումնահետազոտական կենտրոնի առաջատար մասնագետ Իրինա Մանուկյանը և Երևանի Հյուսիսային համալսարանի ուսումնական վարչության պետ, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Զաքարյանը:

«Համոզված եմ, որ ցանկացած հասարակությունում կան կարծրատիպեր, բայց հատկապես մեր հասարակությունում կարծրատիպերի ազդեցությունը դեռևս շատ մեծ է: Միևնույն ժամանակ նկատելի է, որ որոշ կարծրատիպեր սաստիճանաբար փոխվում են»:
Ռուբեն Օհանջանյան, Երևան

«Եթե կինը ուզում է պարզամտորդ դառնալ, թող պայքարի մինչև վերջ, ոչ թե զենքը կես ճանապարհին վայր դնի՝ պարճառաբանելով դա խորականությանը»:
Էդուարդ Հայրապետյան, Երևան

այդ աղջիկների թիվը հասնում է 60 միլիոնի, և այդ իրավիճակի հիմնական պատճառը ծնողների կողմից արու զավակին գերադասելու հանգամանքն է:

Գենդերային բռնությունը առկա է ցանկացած հասարակությունում, դա կանանց սոցիալական, հոգեբանական և տնտեսական ստորադասության հետևանք է: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ երեք կանանցից առնվազն մեկը բռնության է ենթարկվում, ինչը կարող է արտահայտված լինել բռնությամբ մանուկ հասակում, հոգեբանական ճնշում-

ճառներից մեկն էլ այն է, որ նման բռնությունները հիմնականում կատարվում են ընտանիքում, տանը կամ աշխատավայրում և մտածված կերպով թաքցվում թե՛ զոհի, թե՛ հասարակության կողմից: Հարկավոր է «ճեղքել լռությունը», քանի որ բռնությունների մասին ոչ ոք, համենայնդեպս Հայաստանում, չի խոսում: Իսկ կանանց նկատմամբ բռնությունն՝ իր տարբեր դրսևորումներով, կա, նկատելի է, բայց ընտանիքի սամաններից դուրս չի գալիս:

Ուսանողներին իրազեկելու նպատակով մարտի 11-12-ը Երևանի հյուսիսային համալ-

Սեմինարի ընթացքում ուսանողները սովորեցին տարբերել «գենդեր» և «սեռ» հասկացություններն ու գենդերային դերերը: Թրենինգների և ընդհանուր քննարկումների միջոցով պարզվեց, որ սեմինարի մասնակիցները, իրենք էլ այդ մասին չգիտակցելով, առաջնորդվում էին տարածված կարծրատիպերով, և սեմինարն առիթ դարձավ դրանցից ձերբազատվելու համար:

Մասնակիցներին ֆիլմ ցուցադրվեց («Մածունը սև է») Հայաստանի տարբեր սոցիալական խմբերի կանանց առօրյայի, նրանց կարգավիճակի



նկատմամբ վերաբերմունքի (գործարար կանայք, տնային տնտեսուհիներ, գյուղի ծանր հոգսով ծանրաբեռնված կանայք), նրանց թաքուն երեզանքների ու խնդիրների, հաղթահարած դժվարությունների

րի, ՁԼՄ-ներով տրվող հաղորդումների և հասարակության ընդհանուր իրազեկությունն ապահովող այլ միջոցներով: Բացի այդ, գիտակցելը, որ մեզանից յուրաքանչյուրը գեներալին բռնության զոհ կարող է

րուն կազմակերպիչներին, իսկ զոհերին պատճառում նվաստացում, բռնություն, հիվանդություններ, անարգում, վախ և մահ:

Հանդիպումից առաջ և հետո մասնակիցների կարծիքները



ու առավել տարածված կարծրատիպերի մասին:

Անդրադառնալով գեներալին բռնության երևույթին, դրա առաջացման պատճառներին ու դրսևորումներին և նյութը հիմնավորելով մասնակիցների ներկայացրած օրինակներով՝ եզրակացության եկանք, որ մեզանից յուրաքանչյուրը առօրյա կյանքում բազմիցս հանդիպել է նման երևույթների, բայց համատարած կարծրատիպին հետևելով («դա նրանց անձնական գործն է, ուրիշի կյանքին չպետք է խառնվել»), դրանք չի բարձրաձայնել: Ինչպես արդեն նշեցինք, այդ տարօրինակ լռությունը հարկավոր է «ճեղքել» սեմինար-հանդիպումնե-

րառնալ, ստիպեց մասնակիցներին հնարավորինս տեղեկացված հեռանալ սեմինարից՝ հետագայում հավանական բռնության դրսևորման բոլոր ձևերից սեփական անձը, ընտանիքն ու շրջապատի մարդկանց գերծ պահելու համար:

Քննարկման առանձին նյութ դարձավ թրաֆիքինգը կամ մարդկանց «սպիտակ ստրկությունը», որը XX դարի ամենից անոթալի և դաժան երևույթներից է, և որի աճը վերջին տասնամյակում, ցավոք, վտանգավոր չափերի է հասել: Մարդկանց վաճառքը, ի տարբերություն կազմակերպված հանցագործության մյուս ձևերի, աներևակայելի շահույթներ է բե-

տականորեն տարբեր էին: Տարածված կարծրատիպերը, որոնցով մենք առաջնորդվում էինք մինչ հանդիպումը, որոշակիորեն տեղի տվեցին: Բացի այդ, ստացված տեղեկությունները վստահություն ներշնչեցին մասնակիցներին՝ հետագայում թե՛ անձնական կյանքում, թե՛ հասարակությունում և աշխատատեղում ավելի ինքնավստահ և ապահով զգալու համար: Այդպիսով հանդիպումը չափազանց ճանաչողական և արդյունավետ էր:

Արմինե Հովհաննիսյան
*Երևանի հյուսիսային
համալսարանի
լրագրության ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանող*



Հանդիպումների մասնակից ուսանողները ցանկություն հայտնեցին ներգրավվել գենդերային բռնության դեմ ուղղված միջոցառումներին

Հատ մարդիկ՝ տղամարդիկ և կանայք, կյանքում գեթ մեկ անգամ հայտնվում են մի իրավիճակում, երբ նրանց սեռը վերածվում է «առաստաղի»: Այդ խնդիրները ծագում են հասունացման շրջանում, աշխատանքի ընդունվելիս, մասնագիտական առաջխաղացման ժամանակ, ընտանիքում, անձնական կյանքում, ընկերների հետ հարաբերություններում:

Ի՞նչ է սա, ճակատագի՞ր, անատոմիա՞, ինչպես ասել է Ջիզմունդ Ֆրոյդը, թե՞ մեկ այլ բան...

«Գենդեր» հասկացությունը կօգնի պատասխանել այդ հարցերին:

Բնակչության լայն զանգվածներին գենդերային հիմնախնդիրների մասին իրազեկելու, գենդերային կարծրատիպերին և գենդերային սոցիալականացմանը, գենդերային անհավասարությանը և գենդերային բռնության ու թրաֆիքինգի երևույթին, ՉԻԱՀ-ի տարածմանը և այլ խնդիրներին ծանոթացնելու նպատակով 2009 թ. փետրվար-մարտ ամիսներին Վանաձորում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի և Ուսանող բժիշկների գիտական ասոցիացիայի համատեղ ջանքերով իրականացվող «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի շրջանակներում անցկացվել են երեք երկօրյա հանդիպումներ:

Հանդիպումները վարողները մասնակցել են Ծաղկաձորում կազմակերպված հնգօրյա սեմինարի, ունեն գենդերային գիտելիքների դասավանդման փորձ և

լավ են տիրապետում ոչ միայն տվյալ ոլորտի տեղեկատվությանը, այլև ինտերակտիվ պարամունքների անցկացման մեթոդիկային:

Առաջին հանդիպմանը հրավիրվել էին 25 ուսանողուհիներ, որոնց մեծ մասը Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտից էին և այս կամ այն չափով տիրապետում էին գենդերային գիտելիքներին: Այդուհանդերձ պարամունքների ինտերակտիվ բնույթը մասնակիցների մեջ մեծ հետաքրքրություն առաջացրեց, և ուսանողուհիներն ակտիվորեն մասնակցում էին հիմնախնդիրների քննարկմանը, բերում օրինակներ իրենց կյանքից, ներկայացնում ծանոթների հետ կատարված դեպքեր: Մասնակիցներն առանձնակի հետաքրքրություն դրսևորեցին գենդերային բռնության, թրաֆիքինգի և ՉԻԱՀ-ի թեմաներին նվիրված պարամունքների նկատմամբ:

Ամփոփելով հանդիպումների արդյունքները՝ փորձագետները նշեցին, որ ուսանողուհիները միասնական էին կարծրատիպերի մասին իրենց պատկերացումներով՝ դրանք ներկայացնելով որպես մարդու արժանապատիվ կյանքին խանգարող երևույթ: Ընդգծվեց նաև, որ գիտելիքներն օգնում են մարդուն ավելի հեշտ ձերբազատվել խնդիրներից: Հանդիպումներն անցնում էին անմիջական, ընկերական մթնոլորտում: Չնայած դրանք սկսվում էին ինստիտուտում պարամունքներից հետո և շարունակվում մինչև երեկո, աղջիկներն ակտիվ էին և հետաքրքրված: Վարժություններն ու խաղերը հեշտ էին ընկալվում, անցնում



էին առանց բարդությունների: Կարելի է եզրակացնել, որ ուսանողուհիները պատրաստ էին նոր տեղեկատվության ընկալմանը, այն նրանց մեջ դժգոհություն կամ մերժում չէր առաջացնում:

Ի տարբերություն առաջին խմբի՝ կանանց խմբի հետ աշխատելն ավելի դժվար էր, բայց նաև հետաքրքիր: Հանդիպմանը ներկա 30 կանայք տարբեր տարիքի էին (22-ից մինչև 60 տարեկան), տարբեր զբաղվածություն, սոցիալական կարգավիճակ և հասարակական դիրք ունեին. բուհերի դասախոսներ, ուսուցիչներ, բժիշկներ, գործազուրկներ, տնային տնտեսուհիներ, թոշակառուներ: Նրանց մի մասը հասարակական կազմակերպությունների կամ քաղաքական կուսակցությունների անդամ էր: Պարզվեց, որ մասնակիցներից շատերն ընդհանրապես ծանոթ չեն «գենդեր» հասկացությանը և խիստ բացասաբար են վերաբերվում քննարկվող խնդիրներին՝ համարելով, որ կնոջ պարտքն է ենթարկվել ամուսնուն, ինչպես ասված է Աստվածաշնչում:



Առաջին հանդիպման սկզբում կանայք դժվարությամբ էին ընկալում տեղեկատվությունը, մեծ մասը դժվարանում էր առաջադրանքներն ու վարժությունները կատարելիս: Չետաքրքրական էր հետևել, թե պարապմունքից պարապմունք ինչպես էր մեծանում մասնակիցների ակտիվությունը և հետաքրքրությունը, ինչպես էր բացահայտվում երկար ժամանակ թաքնված ներուժը, ինչպես էին փոխվում կանանց կարծիքները քննարկման ընթացքում: Այսպես, կանանցից մեկն ապացուցում էր, որ բնությունը կնոջը տղամարդուց ավելի թույլ է ստեղծել, և նրա գործը տունն է և երեխաները, իսկ ընտանիք կերակրելը տղամարդու գործն է: Բայց հետո պատմեց, թե ինչպես ծանր 90-ական թվականներին, երբ ամուսինը բացակայում էր հանրապետությունից, կատարել է տղամարդու աշխատանք և ապահովել ընտանիքը՝ նույնիսկ ամուսնուց ավելի լավ:

Բոլոր մասնակիցները համաձայնեցին, որ կանայք հանդիպում են գենդերային սահմանափակումների և՛ աշխատանք փնտրելիս, և՛ աշխատանքային գործունեության ընթացքում: Նրանք նշեցին բոլոր սոցիալ-մշակութային մեխանիզմները, որոնք սահմանափակում են կնոջ ինքնաիրացման հնարավորությունները: Նաև խոստովանեցին, որ հենց սահմանափակ հնարավորություններն են ստիպում շատ կանանց ամուսնությունը դիտել որպես սեփական նյութական խնդիրները լուծելու միջոց, իսկ դա, իր հերթին, ծնում է շահադիտական, ոչ անկեղծ հարա-

բերություններ տղամարդկանց հետ, ինչից տուժում են արդեն երկու սեռն էլ: Ի տարբերություն առաջին խմբի՝ այստեղ առավել հետաքրքրություն առաջացրին ընտանեկան բռնության և գենդերային կարծրատիպերի թեմաները: Ուսուցանողներին հաջողվեց հետաքրքրել բոլոր կանանց՝ չնայած նրանց տարբեր կրթական մակարդակին, հնարավորություն տրվեց արտահայտելու սեփական կարծիքը և հանդմունք ձևավորվեց, որ անհրաժեշտ է սատարել միմյանց և աջակցել այն նախաձեռնություն-



ներին, որոնք նպաստում են մեր հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը:

Երրորդ խումբը տղամարդիկ էին: Երկու հանդիպմանն էլ մասնակցել է 25 մարդ՝ հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների անդամներ, պետական ծառայողներ, բուհերի դասախոսներ, ձեռնարկատերեր, բժիշկներ: Թեպետ այս խմբում կրթական մակարդակն ավելի բարձր էր, քան նախորդներում, աշխատանքն այս խմբի հետ առավել ծանր էր: Տղամարդիկ ավելի բուռն էին արձագանքում, հաճախ շեղվում էին թեմայից, նրանց ավելի դժվար էր համախմբել: Սակայն ուսուցանողներին հաջողվեց շփման եզր

գտնել լսարանի հետ և հետաքրքրել մասնակիցներին տեղեկատվությամբ: Առանձնակի հետաքրքրություն առաջացրեց իրավական փաստաթղթերի, գենդերային բռնության դեմ պայքարելու մեխանիզմների մասին տեղեկատվությունը, հնչեցին հետաքրքիր առաջարկություններ:

Երեք հանդիպումների մասնակիցները բարձր գնահատեցին ստացված գիտելիքները և ցանկություն հայտնեցին ներգրավվել գենդերային բռնության դեմ ուղղված հետագա միջոցառումներում: Չետաքրքիր է, որ կանանց հանդիպմանն էին եկել նաև մասնակից աղջիկներից ոմանց մայրերը, իսկ տղամարդիկ խնդրում էին նման հանդիպումներում ընդգրկել իրենց կանանց և դուստրերին: Չանդիպումների բոլոր մասնակիցները ստացան նյութեր, որոնք հակիրճ ներկայացնում են քննարկվող թեմաների բովանդակությունը: Մասնակից-

ները նշում էին միասեռ խմբերի առավելությունները, մասնավորապես ավելի անկեղծ քննարկման հնարավորությունը, բայց առաջարկում էին անցկացնել նաև համատեղ հանդիպումներ: Եվ բոլոր մասնակիցները համոզված էին, որ որքան ավելի լայն զանգվածներ ունենան գենդերային գիտելիքներ, այնքան հեշտ կլինի հասնել մեր երկրում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների:

Նինա Հովհաննիսյան

Վանաչորի պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության դասախոս, «Ընդուն գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի համակարգող Լոռու մարզում



Ընդդեմ գենդերային բռնության պայքարը՝ Ժամանակի հրամայական



«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Լոռու մարզում տեղի ունեցած իրազեկման հանդիպումներին մասնակցում էին հանրության տարբեր խմբերի՝ երիտասարդության, հասարակական կազմակերպությունների, ուսանողների, ՏԻՄ աշխատակազմերի ներկայացուցիչներ: Հատկապես հետաքրքիր ու նշանակալից էին այն հանդիպումները, որոնց մասնակցում էին մարզի

կության՝ գենդերային հիմնախնդիրների գիտակցմանը և դրանով իսկ գենդերային բռնությունների նվազեցմանը նպաստող միջավայրի ստեղծմանը:

Կարևոր է նշել, որ այդ հանդիպումների կազմակերպմանը մեծ աջակցություն են ցույց տվել Լոռու մարզպետարանի, Ալավերդու, Ստեփանավանի քաղաքապետարանների աշխատակազմերը:

Հանդիպումների մասնակիցներն իրենք էլ էին գտնում, որ նման իրազեկման հանդիպումներն արդեն անհրաժեշտություն են, եթե մանավանդ հաշվի առնենք, որ հատկապես գյուղերում տղամարդկանց հիմնական մասը մեկնում է տարբեր երկրներ՝ սեզոնային աշխատանքների և շատ հաճախ չի էլ վերադառնում: Մասնակիցներն այդ համատարած արտահոսքի պատճառները տեսնում էին ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի, այլև հասարակության մեջ տարածված այն կարծրատիպերի մեջ, որ տղա-

Մասնակիցները նշում էին, որ վաղուց արդեն կանայք զբաղվում են այնպիսի գործունեությամբ, որը, ըստ մեզ մոտ տարածված կարծրատիպերի, բոլորովին էլ կնոջ գործ չէ. տնամերձ հողամասերի, այգիների, դաշտերի մշակում, անասնապահություն, ստացված բերքի առևտրի կազմակերպում իրենց գյուղից դուրս: Այս ամենը նրանց դարձրել է մի տեսակ «տղամարդ», բայց այդ ամենից խուսափել նրանք չեն կարող. տանը տղամարդ չկա: Մյուս կողմից էլ տղամարդը հետ վերադառնալ չի կարող. փող չունի, եթե եկավ էլ, աշխատանք չկա, իսկ ինքը, որպես տղամարդ, պարտականություններ ունի:

Հետաքրքիր է, որ այս ամենը մասնակիցները բնորոշեցին որպես բռնության երևույթ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց և, որ ամենակարևորն է, երեխաների նկատմամբ: Չէ՞ որ արդյունքում երեխաները շատ են տուժում. մեծանում են միածնող, չեն տեսնում ո՛չ հայրա-

...Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների և կանանց հիմնական ազատությունների խախտում է, ինչպես նաև խոչընդոտում է կամ թույլ չի տալիս նրանց օգտվելու այդ իրավունքներից ու ազատություններից...

Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիր (1993 թ.), նախաբան

տարբեր տարածաշրջանների՝ Սպիտակի, Գուգարքի, Թունամայանի, Ստեփանավանի, Տաշիրի գյուղապետերը: Այդ հանդիպումները *նպատակ ունեին* հնչեցնելու գենդերային բռնության հիմնախնդրի կարևորությունը, նպաստելու հասարա-

մարդը պետք է լուծի ընտանիքի բոլոր ֆինանսական խնդիրները, տղամարդը պետք է իր վրա վերցնի ընտանիքի անդամներին իրենց նպատակներին հասցնելու պարտականությունը. «եթե այդ ամենը չես կարող, էլ ի՞նչ տղամարդ ես»:

կան, ո՛չ էլ իսկական մայրական խնամք:

Պակաս կարևոր ուշադրության չարժանացավ նաև դրսում տղամարդկանց որպես էժան աշխատուժ օգտագործվելու հիմնախնդիրը, դրսից հարազատ գյուղ, ընտանիք տար-



բեր հնարավոր վարակների ներմուծման հնարավորությունը: Մասնակիցները գտնում

նում է ընտանիքի անդամների նկատմամբ բռնության կիրառմամբ: Ընտանիքը շատ հաճախ

որոշում կայացնողների թվում, որովհետև սեփական ֆինանսական միջոցներ չունեն: Նրանք սեփական ֆինանսական միջոցներ չունեն, որովհետև սակավ են որոշում կայացնողների, ավագանիների, գյուղապետերի շարքում: Մասնակիցները համաձայնեցին ուսուցանող Ա.Ավետյանի այն մտքին, որ նման իրավիճակից ելք կա, եթե միայն արհեստական միջոց կիրառվի. պետք է առաջ քաշել անհրաժեշտ մակարդակով գենդերային քվոտաների կիրառման գաղափարը:

Ընդհանուր առմամբ, նշեցին մասնակիցները, գենդերային հիմնախնդիրների էության գիտակցումն ու դրանով իսկ գենդերային բռնությունների նվազեցմանը նպաստող միջավայրի ստեղծումը օգուտ կբերի ողջ հասարակությանը, կնպաստի նրա կյանքի բարեկեցության մակարդակի բարձրացմանը:



էին, որ նման իրազեկման հանդիպումներ պետք է կազմակերպել հենց գյուղաբնակների համար, հատկապես ձմեռային ժամանակաշրջանում, երբ տղամարդիկ վերադառնում են: Բնակիչները տարբեր հիվանդություններից խուսափելու հնարավորությունների մասին գիտելիքների խիստ կարիք ունեն:

Մասնակիցները խոսեցին այն մասին, որ դրսում տղամարդը, աշխատելով որպես էժան վարձատրվող անձ, իրեն նսեմացած է զգում և տուն դառնալով՝ փորձում է վերադարձնել կորցրածը, իրեն «տղամարդ» զգալ և դա հաճախ ա-

այդ երևույթները չի էլ ընդունում որպես բռնություն, չէ՞ որ հայրը, ամուսինը տուն է եկել, փող է բերել, նա ամեն ինչի իրավունք ունի:

Մասնակիցները կարևորեցին նաև այն փաստը, որ թեև կանայք իրենց վրա են վերցրել ընտանեկան բազմաբնույթ հոգսերի լուծման պարտականությունը, այնուամենայնիվ խուսափում են ավագանու, գյուղապետերի ընտրություններին մասնակցելուց: Դա բացատրում են ֆինանսական միջոցների բացակայությամբ: Ստացվում է մի փակ շրջան. կանայք սակավ են ավագանիների, գյուղապետերի,

Արմեն Ավետյան

Վանաչորի սոցիալական ծառայությունների կենտրոնի բաժնի վարիչ, «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի ուսուցանող

Արմենուհի Կյուրեղյան

Վանաչորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ամբիոնի դասախոս, «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի փորձագետ

Բազմաթիվ ընկրանիքներում սկանսարես եւ եղել բռնության տարբեր դրսևորումներին: Գյուղերում մարդիկ պահապանում են ավանդույթները, ինչը սերունդների և սեռերի հարաբերություններում հանգեցնում է գենդերային բռնության:

Ես շար կցանկանայի, որ աբորտին՝ հղիության արհեստական ճանապարհով ընդհատմանը՝ որպես բռնության դաժան տեսակի, մեծ ուշադրություն դարձվեր: Նաև կանանց, երիտասարդ աղջիկներին և նոր ընկրանիք կազմողներին դրա կործանարար հետևանքների մասին իրազեկելու միջոցներ չեռնարկվելին:

*Էլմիրա Բարսեղյան
ընկրանեկան բժիշկ, Արտաշատ*



Գենդերային հավասարության կոչերն ու ձգտումներն ավելի քան հայաբնույթ են



րային բռնության և գենդերի մասին ընդհանրապես: Այս հարցում առկա են ինչպես ընդհանրական, այնպես էլ տրամագծորեն հակառակ, նույնիսկ միմյանց բացառող կարծիքներ: Վերջին շրջանում հասարակության տարբեր խմբերի մոտ անցկացված իրազեկման հանդիպումները և այդ խմբերի անդամների հետ ունեցած շփումները մեզ հնարավորություն տվեցին հանգելու հետևյալ եզրակացությունների:

Հիմնականում այն կարծիքն է տարածված, որ գենդերային բռնության հիմնախնդիրների իրազեկումը հիմնականում հասարակական կազմակերպությունների գործն է, քանի որ երկրում հեռանկարային դերի մեծացման առումով նրանք են ֆավորիտները: Իսկ սովորական քաղաքացիները այս հարցում ներկայանում են որպես խիստ չեզոք

Մարդկանց համեմատաբար սակավաթիվ մի հատված ընդհանրապես ժխտում է գենդերային բռնության գոյության փաստն անգամ: Նրանց վատ թաքցրած դժգոհությունն ամեն անգամ գլուխ է բարձրացնում ժեստային պասիվ արտահայտմամբ, երբ հնչում է *գենդեր* բառը: Սակայն իրականում այս մարդիկ հոգու խորքում մտածում են հակառակը: Նրանք պարզապես «հակառակության դև» զոհն են և հակառակության մեջ են տեսնում իրենց ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորությունը:

Մարդկանց մյուս խումբը, որոնց կարելի է անվանել փարիսեցիական կեցվածքով հայրենասերներ, համոզված են, որ գենդերը, գենդերային բռնությունը և դրա հետ կապված ամեն ինչ շինծու է, ներմուծված դրսից՝

Արդի հասարակությունների, ժողովրդավարական և քաղաքակիրթ պետությունների ենթակառուցվածքային ցանկացած ոլորտի զարգացում անհնար է պատկերացնել առանց այդ ոլորտի գենդերային փորձաքննության: Սա ժամանակակից աշ-

«Կանայք շարունակում են հնազանդվել տղամարդկանց և հանդուրժում են նույնիսկ բռնությունը, իրենք իրենց ընդհանրապես չեն հարգում, այսինքն՝ կանայք, ինչքան էլ իրազեկ լինեն, դեռ պատրաստ չեն թոթափելու կարծրաբերիքը և հասարակության գերին ջննալու»:

Արթուր Նազարյան

խարհի իրողություններից մեկն է: Եթե նույնիսկ գենդերային հայեցակետը չի վերանայվում հասարակական կյանքի զարգացման, պետական համակարգի կառավարման տարաբնույթ ոլորտներում, ապա գոնե գիտակցվում է դրա իրականացման անհրաժեշտությունը: Այս հարցում բացառություն չեն Հայաստանն ու հայ հասարակությունը: Այլ խնդիր է, թե ինչպես է արձագանքում հայ մարդը, երբ խոսվում է գենդերային հարաբերությունների, գենդե-

կան ներգործվող, որոնց տարբեր ծրագրերի շրջանակներում կարելի է իրազեկել, համախմբել, բայց վերջին հաշվով նրանք վերադառնում են գրոյական վիճակի, կարծես տեղի ունեցածը բլուրովին իրենց չի վերաբերում: Մի խոսքով, կեսարյան ոճով՝ «եկանք, լսեցինք, գնացինք»: Այս դեպքում այնքան էլ հավատ չկա, որ իրազեկման արդյունքում ի հայտ եկած քաղաքացիական ակտիվությունը կարող է նկատելի արդյունքներ տալ:

քայքայելու ազգային սովորույթներն ու արժեքները: Նրանց խորին համոզմամբ նման ծրագրերը համաշխարհային գաղտնի, գերհզոր ուժերի դավադրության արգասիքն են ընդդեմ փոքր ժողովուրդների, մասնավորապես՝ ընդդեմ բազմաչարչար հայ ժողովրդի: Այս մարդիկ կան ծանոթ չեն հայոց պատմության գենդերային վերլուծությանը, կան ծանոթ լինելով հանդերձ՝ արտահայտում են իրենց սոցիալական կարգավիճակից բխող կարծիք:



Նրանք չեն ուզում ընդունել այն ակնառու փաստը, որ մեր պատմության մեջ տեղ-տեղ լուսարձակվող գենդերային հանդուրժողականության կամ գենդերային հավասարության կայծերը դեռևս երաշխիք չեն, որ ներկայումս ամեն ինչ իդեալական է: Այս հարցում վաղեմության ժամկետը լրացել է: Մարդկանց այս խմբի ֆոքիան նմանատիպ ծրագրերի հանդեպ այնքան մեծ է, որ խանգարում է տեսնելու դրականն ու ավանգարդայինը: Իրականում Հայաստանում գենդերային բռնության դեմ իրազեկման հանդիպումները, գենդերային հավասարության կոչերն ու ձգտումներն ավելի քան հայաբնույթ են և

ոչ այլ ինչ են, եթե ոչ քրիստոնեական սկզբունքների ու պատվիրանների պահպանմանը վերադառնալու փորձ: Քրիստոնեական ճշմարիտ աշխարհընկալումն է, որ կանանց և տղամարդկանց դնում է իրավական հավասար հարթության վրա:

Եվ, ի վերջո, գալիս է մարդկանց այն խումբը, որոնց համար գենդերային արդարությունը, գենդերային բռնության դեմ պայքարը ոչ միայն ակնառու և օրինաչափ գործունեություն է, այլև կենսակերպ է: Այս մարդիկ իրազեկվելուց հետո մի օր բացահայտում են, որ փոխվել է իրենց վերաբերմունքը գենդերային հարաբերությունների հարցում: Այս

խմբի լիդերության հակում ունեցող հատվածը սկսում է սովորեցնել, ուրիշներին փոխանցել իր ձեռք բերած նոր գիտելիքներն ու համոզմունքները: Այս խումբը դառնում է գենդերային գիտելիքների կրող, կիրառող և փոխանցող: Որպես կանոն, այս խմբի ներկայացուցիչները մյուս խմբերի ներկայացուցիչներին գերազանցում են գրեթե բոլոր չափանիշներով: Բարձրագույն չի հնչի, եթե այս մարդկանց անվանենք հասարակության սերուցք:

Արտակ Հովհաննիսյան

Գլխավորի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս, «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի փորձագետ

«Սպիտակ ժապավենը» բոլորին վայել կլինի



համար անցկացված սեմինարից հետո նորովի գիտակցեցի այդ հիմնախնդիրը: Առանձնապես ինձ ցնցեց այն փաստը, որ կանայք բռնության հետևանքով ավելի շատ են մահանում, քան օնկոլոգիական հիվանդություններից:

«Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի շրջանակներում սեմինարներ են անցկացրել տարբեր խմբերում. ուսանողուհիների՝ Վանաձորում, տղամարդկանց՝ Վանաձորում, դպրոցականների՝ Դիլիջանում, կանանց՝ Արտաշատում, աշակերտուհիների՝ Նոր Հաճնում: Եվ բոլոր սեմինարների ընթացքում գիտակցել են, որ կարևոր առաքելություն են կատարում՝ մարդկանց հաղորդելով իմ ստացած գիտելիքները: Այո, մարդիկ պետք է գիտենան այդ խնդրի մասին, քանզի այսօրվա մեր անտարբեր վերաբերմունքը վաղը կարող է վերածվել բռնության մեր նկատմամբ:

Բոլոր սեմինարներին մասնակիցները նշում էին, որ Հայաստանը չի պատկանում այն երկրների թվին, որոնց շրջանցել է «գենդերային բռնություն» չարիքը: Արտաշատում պատմում էին ընտանեկան բռնության դեպքերի մասին՝ նշելով, որ տուժածները հաճախ չեն համարձակվում բարձրաձայնել իրենց հետ կատարվածը, իսկ հոգեբանական կամ տնտեսական ճնշման դեպքում կանայք անգամ չեն էլ գիտակցում, որ բռնության են ենթարկվում: Ամուսինն արգելում է ծնողներին այցի գնալ, փող չի տալիս կամ չի ֆուլլատրում աշխատել. մանրուքներ են: Դեռևս չափազանց ազդեցիկ են կարծրատիպերը՝ «ծեծում է, ուրեմն՝ սիրում է», «լվացքը դրսում չեն անում»: Եվ շատերը տարիներ շարունակ ապրում են բռնության մթնոլորտում՝ թաքցնելով խնդիրը, նույնիսկ խնդիր էլ չեն համարում, այլ սոսկ փոքր ընտանեկան զգվռտոցներ, որոնց արձագան-



քը, սակայն, կարող է ողջ կյանքում հետապնդել նման ընտանիքում մեծացած երեխաներին: Եվ այդ երեխաները, ինչպես պնդում են հոգեբանները, մեծ մասամբ դատապարտված են երկու բարդությի՝ կամ բռնարարի, կամ զոհի:

Հայաստանում հաճախ նույնիսկ մեղադրում են բռնության զոհերին, թե նրանք իրենք են ինչ-որ արարք թույլ տվել: Բռնության զոհերը չեն հավատում, որ իրավապահ մարմին-

նուսնուն բռնության և դեռ հանիրավի մեղադրանքներ է ներկայացնում նրա դեմ:

Տղամարդկանց և տղաների հետ հանդիպումների ժամանակ քննարկվել է տղամարդկանց նկատմամբ կիրառվող բռնության թեման: Մասնակիցները նշում էին, որ հայ հասարակությունում շատ դժվար է «իսկական տղամարդ» լինել, համապատասխանել առնականության չափանիշին: Նրանց կարծիքով՝ տղամարդիկ հաճախ են հոգե-

տղամարդու-ագրեսորի-կերակրողի», ընտանիքի տիրոջ մասին: Արական սեռի բոլոր մասնակիցները համաձայն էին սպիտակ ժապավեն կապել՝ ի նշան պայքարի ընդդեմ բռնակալության և դաժանության: Սպիտակ ժապավենը տղամարդկանց և կանանց միասնության միջազգային խորհրդանիշ է ընտանեկան բռնության դեմ մղվող պայքարում: Այն սկիզբ է առել 1991 թ.՝ Մոնրեալում տեղի ունեցած ողբերգությունից հետո, երբ մո-

«Մարտի 11-ին և 12-ին Հյուսիսային համալսարանում տեղի ունեցավ ՄԱԿ-ի կազմակերպած իրազեկման հանդիպումը՝ «Գենդեր և գենդերային բռնություն» խորագրով:

Կազմակերպիչները սկզբից ենթադրեցին ազատ ու անկաշկանդ մթնոլորտ: Եվ որպեսզի կարողանային արտահայտել մեր պատկերացումները գենդեր և սեռ հասկացությունների մասին, փորձեցին խաղ կազմակերպել:

Ուսանողները խմբերի բաժանվեցին, և յուրաքանչյուր խմբին առաջարկվեց արտահայտել իրենց մտքերը գենդերի և սեռի փարանջապման ու դրանց առանձնահատկությունների մասին: Արդյունքում մեր մտքերը ավելի պարզորոշ ու հստակ դարձան:

Կարծրապիպերի տեղը հասարակության մեջ ցույց տալու նպատակով կազմակերպվեց երկրորդ ոչ պակաս հեղափոխի խաղը: Այն միաված էր պարզելու կնոջ և տղամարդու երեք ամենաբնորոշ հատկանիշները, հենց դրանք էլ վեր հանեցին մեր կարծրապիպերը»:

Նարինե Մելքոնյան, ուսանողուհի

ների աշխատակիցներն իրենց պաշտպան կլինեն, կհասկանան կամ թեկուզ պարզապես լսելու, ճգնաժամային իրավիճակը քննարկելու պատրաստակամություն կդրսևորեն: Կանանց՝ իրավիճակը պարզաբանելու բոլոր փորձերը կորչում են «սնոտիապաշտության ճահճում», հայրիշխանական մշակույթի ավանդույթներում, համաձայն որոնց՝ ամուսինը տեր է, իսկ կինը պարտավոր է ենթարկվել: Կինը վախենում է կորցնել ընտանիքը, իր երեխաների հորը, վախենում է միայնությունից, սոցիալական և տնտեսական անպաշտպանությունից: Դիմելով ոստիկանություն՝ զոհը հաճախ վերածվում է մեղադրյալի: Նրան մեղադրում են, թե ինքն է իր սխալ վարքագծով հասցրել ա-

բանական բռնության ենթարկվում ինչպես հասարակության մեջ, այնպես էլ ընտանիքում, քանի որ համարվում է, որ տղամարդը չպետք է երբևէ թուլություն ցուցաբերի, տղամարդկանց շրջապատում պետք է իրեն դրսևորի «տղամարդուն վայել ձևով», միևնույն ժամանակ լավ վաստակի, որպեսզի և՛ ընտանիքում, և՛ հասարակության մեջ չհանդիմանեն. «Ի՞նչ տղամարդ ես, եթե չես կարող նույնիսկ ընտանիքդ ապահովել»:

Մասնակիցները նաև նշում էին, որ տղամարդկանց կողմից կիրառվող բռնությունը այդ սոցիալ-սեռային խմբի ոչ լիարժեքության բարդույթ է, որը արմատավորվում և պարտադրվում է հասարակության կեղծ իդեալ-կարծրատիպով՝ «իսկական

լագարը գնդակահարել է ճարտարապետական ուսումնարանի 14 ուսանողուհիների:

Գենդերային բռնության խնդիրն արտացոլում է հասարակական հարաբերություններում առկա աններդաշնակությունը, դրա սրությունը վկայում է հասարակության մեջ անառողջ բարոյական մթնոլորտի մասին: Պետության վերաբերմունքը գենդերային բռնությանը նշանակալի է ժողովրդավարական միտումների զարգացման և քաղաքացիական հասարակության կայացման համար: Այն երկրում, որտեղ հանդուրժում են «առօրեական» և այդպիսով կոնֆլիկտների լուծման մեթոդ դարձած, «օրինականացված» բռնությունը, քայքայվում է թե՛ ընտանիքը և թե՛ հասարակությունը:



Հասարակության հանդուրժողականությունը ցանկացած տեսակի բռնության նկատմամբ նշանակում է հրաժարում հակասությունների և կոնֆլիկտների հաղթահարումից, քաղաքակիրթ հասարակության կառուցումից:

Գենդերային բռնության խնդիրն ուղղակիորեն կապված է երկրում գենդերային անհավասարության հետ: Գենդերային հավասարության հասնելու իրական պետական քաղաքականության բացակայությունը բռնության տարածման կարևորագույն պատճառներից է:

Այսպիսով, ակնհայտ է, որ գենդերային բռնության դեմ

պայքարելու համար անհրաժեշտ է պետությունների քաղաքական կամքը: Անշուշտ, դժվար է պայքարել բռնության դեմ, և ոչ մի միջազգային արշավ՝ անգամ ամբողջ մի տասնամյակ տևողությամբ, չի օգնի, եթե հասարակությունը չի ցանկանում գիտակցել այդ չարիքի քայքայիչ հետևանքները: Ուստի շատ կարևոր է այսպիսի սեմինարների անցկացումը, որոնք բարձրացնում են բնակչության իրազեկությունը և կարող են ազդեցություն գործել մարդկանց գիտակցության վրա: Եվ տղան, որը սեմինարի սկզբում չէր ընդունում գենդերային հավասարության գաղափարը, դրա

ավարտին ասում է. «Ընտանիքում պետք է տիրեն սերը, փոխըմբռնումը և հարգանքը, ընտանիքի անդամներից ոչ ոք չպետք է ճնշի մյուսին: Բռնությունը ոչ մի լավ բանի չի հասցնում»...

Համաձայնության և ներդաշնակության աշխարհում անզիջողությունը միշտ կարելի է շտկել բարությանը և փոխըմբռնմամբ: Եվ միայն այդ պարագայում մեր երեխաները երջանիկ և առողջ կլինեն:

Ռուզաննա Փանոյան
«Ընդդեմ գենդերային բռնության
Հայաստանում»
ծրագրի փորձագետ

«Երկու օր մասնակցելով «Ոչ գենդերային բռնությանը» խորագրով հանդիպմանը՝ ամբողջ կուրսը լցվեց դրական էմոցիաներով, մեր աշխարհայացքում իսկապես բեկում տեղի ունեցավ, շար կարծրարիպեր փշրվեցին՝ տեղի տալով գիտելիքներին: Կազմակերպիչ-վարողների անչը մեզ համար դարձավ օրինակ. կիմն ամենակարող է և պարտավոր է չերբազարվել բարոյություններից: Հանդիպումը մեզ նաև հնարավորություն ընձեռեց, որ ավելի լավ ճանաչենք ու մպերմանանք մեր համայնաբանի ուսանողների հեղ: Ընդհանուր ուրախ ու անկաշկանդ մթնոլորտը նպաստեց, որ երկրորդ օրվա ավարտին ավելի ազատամիտ ու օբյեկտիվ դարձինք: Ցանկալի է, որ նմանօրինակ միջոցառումները շարունակական լինեն»:

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐՄԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆԵՐ՝ Արմինե Հովհաննիսյան, Էմմա Գրիգորյան, Վարդուհի Բեկզադյան, Անի Քոթանջյան, Սրբուհի Մարգարյան, Հռիփսիմե Չալլադյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում հեղինակներին հողվածները տրամադրելու համար

Համարը պատրաստել են **Պենմա Հասարթյանը, Գայանե Արմաղանովան, Իրինա Շահինյանը**
Համարը խմբագրել է **Անահիտ Հարությունյանը**
Ձևավորումը՝ **Արթուր Բոյախյանի**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա:
Երևան 0002, Մարյան 22,
Հեռ./Ֆաքս (37410) 53-68-02
Email: jemma.hasratyan@gmail.com,
aawue@arminco.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի տպարանում:
Երևան, Ավան, Դավիթ Մալյան 45,
Հեռ. 54-49-82 (գրասենյակ),
62-38-63 (տպարան)